

մը արքայանովը լինտին մէջ կոտորած ակռայի մը արմատն էր պատճառը այս թուեալութիւն, որ քանի մը ժամուան մէջ տարածուեցաւ դէմքին, ուռեցնելով այտին մէկը, հացի գունտի մը չափ, բայց մա՛նաւանդ լեզուն աճեցուց, ձեռքէ մը աւելի խոշոր ընելով զայն, որ կը կախուէր չրթներէն՝ չարչարագին գալարումներով: Գասապեան կարապետը, հիացիկ, ըրաւ Մաթիկին գովեստը իբրեւ մեծ ատամնաբոյժ: Այդ օրերուն անոնք, ատամնաբուժները, չրջուն բժիշկներ էին, այսինքն՝ չարլաթմաններ, որոնք փողոցներու քառանկիւններուն, չրջուած կողովի մը բարձրացած կամ դելով, կամ զանգակով, աւելի կոշտերը՝ զուռնայով իրենց ունեւարմը կ'ընէին, հրաշագործ իրենց դեղերը մատուցանելով ամէնէն յամառ ցաւերուն, զանոնք բոլորաբար խորտակելով: Հիւրընկալ տանուտէրը, հինաւուրց աղա, հաճի ալ, ինքնատիպ ու խօսուն, անոր հրաշքը բաւարար չափով մը փառաբանելու համար, սարքեց սեղան: Ու ընկեր Մաթիկը հոն տեսաւ քանի մը դարու մեր բարքերէն նմոյշներ, որոնք կը զոհուէին, չծանրաբեռնելու համար այս պատմումը: Անոր համբաւը պատեցաւ քաղաքը: Ու Մելիք օղլու Մատթէոս էֆէնտին ներկայացաւ մինչեւ կառավարիչին, փտած անոր ակռաներն ալ դարմանելու պաշտօնով: Առաւ կառավարիչ պէյէն գնահատական յանձնարարագիր մը, որ անոր մեծագոյն ծառայութիւնը պիտի մատուցանէր դէպի արեւմուտք իր արշաւին մէջ, ոստիկանները յարգանքի հրաւիրելով այդ թուղթի կտորին դէմ:

Ճարտար բժիշկ ու պատուաւոր երիտասարդ: Համիտի օրով կառավարիչներն ալ վար չէին իրենց վեհապետին խելքէն: Հոն էր, որ մօրուքը նուիրագործուեցաւ պաշտօնապէս, քանի որ ոստիկանները արգիլուած էին «վնասակար անձերու» դասակարգին ելլելու՝ անոր մօրուքին սանդուխէն: Տոքթոր էֆէնտիները, առանց դաւաճանութեան, զայն կը կրէին քաղաքին մէջ: Ստոյգ մահէն ազատուած երիտասարդը, կրտսեր որդին Տոմպայեան հաճի Մարուքէին, իր ապաքինումէն յետոյ,